

Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

1. Լուսինե Մարտիրոսյան	28. Լուսինե Սահակյան
2. Գոռ Հովհաննիսյան	29. Երվանդ Վարդոսյան
3. Կարեն Կիրակոսյան	30. Արամ Մելքոնյան
4. Գրիշա Բալասանյան	31. Անետա Սարգսյան
5. Արամազդ Կիվիրյան	32. Ավագ Լալայան
6. Քրիստինա Գևորգյան	33. Ծովինար Բալայան
7. Մարգարիտա Պողոսյան	34. Շուշան Ադամյան
8. Աշխեն Դաշյան	35. Վահե Հովսեփյան
9. Քրիստինա Բեյբության	36. Արամ Կարախանյան
10. Ժիրայր Սաֆարյան	37. Գևորգ Դավթյան
11. Մնացական Սարգսյան	38. Արմեն Վարդանյան
12. Աննա Սարդարյան	39. Մինաս Մուրադյան
13. Խաչատուր Խաչատրյան	40. Նարեկ Գրբոյան
14. Միհրան Աղաբաբյան	41. Իրինա Հակոբյան
15. Արմինե Կարապետյան	42. Հակոբ Սաֆարյան
16. Հայարիի Սարգսյան	43. Հեղինե Կիվիրյան
17. Արզուման Ղազարյան	44. Տիգրան Առաքելյան
18. Ռոբերտ Բեջանյան	45. Գայանե Դեմիրյան
19. Տաթևիկ Ասատրյան	46. Անի Գինոսյան
20. Անահիտ Ոսկանյան	47. Սեյրան Ազիզյան
21. Վահե Գրիգորյան	48. Տիգրան Առաքելյան
22. Տիգրան Եգորյան	49. Հովհաննես Սաթևոսյան
23. Լուսինե Հակոբյան	50. Ելենա Կասպարովա
24. Լիպարիտ Սիմոնյան	51. Կարեն Հակոբյան
25. Հովիկ Արսենյան	52. Քրիստինա Ռուբենյան
26. Մարատ Կոստանյան	53. Ռուզաննա Ազրոյան
27. Նիկոլայ Բաղդասարյան	54. Նորիկ Նորիկյան
	55. Գևորգ Գյոզայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հասկացություններ	3
2. Ներածություն	4
3. Սահմանադրության փոփոխություն թե նոր սահմանադրություն ..	6
4. Նոր սահմանադրության օբյեկտիվ անհրաժեշտությունը	9
5. Մարդու իրավունքների գլխում առկա վտանգները	16
6. Կառավարման համակարգի վտանգները	30
7. Օրենսդիր, դատական և գործադիր համակարգերի վտանգները...	33
8. Եզրահանգումներ.....	40

ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանադրություն – Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունվել է 1995թ.-ի հուլիսի 5-ի հանրաքվեով, Սահմանադրության փոփոխություններն ընդունվել են 2005թ.-ի նոյեմբերի 27-ի հանրաքվեով):

Նախագիծ - 05/10/2015թ.-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկված և հանրաքվեի դնելու համար հավանության արժանացած Ն-849-21.08.2015, 05.10.2015-ՊԻ-011/0 փաստաթուղթը

ՄԻԵԿ – Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (Հռոմ, 4 նոյեմբեր 1950թ.)

ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան

Դաշնագիր – Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ի 2200Ա(XXI) բանաձևով)

ՄԻԿ – Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտե

Հանձնաժողով – ՀՀ նախագահի 4 սեպտեմբերի 2013 թվականի ՆՀ-207-Ն որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով:

Վենետիկի հանձնաժողով – Եվրոպայի Խորհրդի Ժողովրդավարության իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով

Ծանոթագրություն.

Կարծիքի սույն հատվածների մասով ավելի մանրամասն պարզաբանումների համար խնդրում ենք դիմել մեր ներքոնշյալ գործընկերներին.

Իրավաբան Գոռ Հովհաննիսյան (Իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր/Գերմանիա), Հազենի Համալսարանի Գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս, էլ. փոստ՝ gor.hovhannisyan@rewi.hu-berlin.de) - Կարծիքի 3-րդ և 5-րդ գլուխներում, Նախագծի 23, 69, 129 հոդվածների մասով դիտարկումներ

Փաստաբան Վահե Գրիգորյան - Կարծիքի 3-րդ բաժնում, նախագծի 3, 41, 42, 60, 63, 65 և 78 հոդվածների մասով դիտարկումներ

Ներածություն

Սույն կարծիքը հանրությանն է ներկայացվում փաստաբաններից¹ կազմավորված խմբի (այսուհետև խումբ) կողմից, ովքեր իրենց պարտքն են համարել մասնագիտորեն վերլուծել և հանրությանը ներկայացնել նախագծի անհրաժեշտության բացակայությունը, ինչն էլ հնարավորություն կարող է տալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, մասնակցելով հանրաքվեին, տեղյակ լինել ներկայացված նախագծի վտանգավոր դրույթներին:

Խումբը ցանկանում է արձանագրել, որ նպատակ չի հետապնդում զբաղվել քաղաքական գործունեությամբ, սակայն հաշվի առնելով այն, որ Սահմանադրությունը հանդիսանում է իրավական-քաղաքական փաստաթուղթ, դրա վերլուծությունը չի կարող շրջանցել քաղաքական կոմպոնենտը, և վերլուծությունն էլ կլինի թերի, եթե վեր չհանվեն, նախագծի հետ համադրության մեջ չներկայացվեն այսօր Հայաստանում առկա մի շարք էական հարցեր:

Խումբն արձանագրում է նաև, որ Հայաստանում ապրող անձանց, ինչպես նաև ողջ հայ ազգի համար, այս կարևորագույն ժամանակաշրջանում ցանկացած լոյալ, անտարբեր, հստակ գնահատականներ չպարունակող, հասարակությունից օտարված, սուբյեկտիվ շահերով պայմանավորված վերաբերմունք կարող է ճակատագրական լինել, ուստի այդ է նաև պատճառը, որ խումբը ցանկանում է իր կարողությունների սահմաններում հանրությանը ներկայացնել նախագծով առաջարկվող որոշ դրույթների վտանգավորությունը և առհասարակ ներկա պահին նախագծի օբյեկտիվ անհրաժեշտության բացակայությունը:

Խումբը նպատակ չի հետապնդում առաջարկներ ներկայացնել իշխանություններին, քանի որ գտնում է, որ ցանկացած իշխանությունների առաջնահերթ խնդիրն է Հայաստանում ապահովել իրավունքի գերակայությունը, սահմանադրության կիրառումը, ըստ հավուր պատշաճի ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը, անկախ դատական համակարգի ստեղծումը, իշխանության բոլոր օղակներից կոռուպցիայի արմատախիլ անելը, իրական ազատ տնտեսական մրցակցության ապահովելը և այլն, որից հետո հնարավոր կլինի գնահատել սահմանադրության թերությունները և քննարկումներ ծավալել բոլորովին նոր սահմանադրություն ունենալու շուրջ:

Խումբը փաստում է, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում իշխանությունները գրեթե չեն լուծել իրենց առջև դրված խնդիրները, սակայն անվերջ

¹ Խմբի կազմի մեջ է մտնում նաև Իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), Հագենի Համալսարանի Գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս Գոռ Հովհաննիսյանը:

փոփոխել են օրենքներ՝ հանրությանը անվերջ ներկայացնելով, թե իբրև խնդիրներն օրենքների անկատարության մեջ են, թեև այդ օրենքները փոփոխելուց հետո էլ հանրության համար շոշափելի արդյունքներ չեն արձանագրվել: Նման պայմաններում խումբը գտնում է, որ իշխանություններն իրենց գործունեությամբ չեն ապացուցել, որ կարող են կազմակերպել արդար ընտրություններ, Հայաստանում երաշխավորել իրավունքի գերակայություն, ստեղծել արդար, անկախ, անկաշառ դատական համակարգ, երաշխավորել ազատ տնտեսական մրցակցություն: Նման պայմաններում ավելին քան առկա է ողջամիտ և օբյեկտիվ կասկած. առաջարկվող նախագիծը օժտված է բարձր սուբյեկտիվ շահերով:

Այսպիսով՝ սույն կարծիքով խումբը կանդրադառնա միայն այն հարցերին, որոնք իրենց մեջ սպասվելիք վտանգներ են պարունակում, ինչը բնավ չի ենթադրում, որ նախագծի մնացած դրույթները, համեմատած սահմանադրության դրույթների հետ առավել առաջադիմական են: Այս առումով խումբը փաստում է, որ ներկայացված նախագծում չկա առաջ քաշված գեթ մեկ հարց, որը հնարավոր չէ կարգավորել ներկայիս սահմանադրության շրջանակներում՝ բացառությամբ խորհրդարանական կառավարման համակարգի:

Խումբը չի կարող այս ամենը հաշվի չառնելով անդրադառնալ միայն նախագծի իրավական մասին, քանի որ այդ դեպքում, ինչպես նշվեց վերը, սույն կարծիքը կլինի կյանքից կտրված իրավական ինչ-որ փաստաթուղթ, որը ոչինչով չի կարող օգտակար լինել Հայաստանում ապրող անձանց: Հետևապես սույն կարծիքի հասցեատերը ոչ թե իշխանություն է, որ նախաձեռնել է նախագծի անցկացումը, այլ ՀՀ քաղաքացին, ով պետք է գնա քվեարկության:

ԳԼՈՒԽ 1. Սահմանադրության փոփոխություն, թե՛ նոր սահմանադրություն

Խումբն անհրաժեշտ է համարում նախ անդրադառնալ այն հարցին, թե արդյոք ներկայացված նախագիծը սահմանադրության փոփոխություն է, թե այն բոլորովին նոր սահմանադրություն է:

Ակնհայտ է, որ 2013 թվականի սեպտեմբերի 4-ի ՆՀ-207-Ն հրամանագրում² խոսվում է սահմանադրական բարեփոխումների մասին: Նույն հրամանագրով ստեղծված հանձնաժողովը (այսուհետև Հանձնաժողով) նույնպես խոսում է սահմանադրական բարեփոխումների մասին: Ինքնին բարեփոխում բառը իրենից ենթադրում է եղածը բարեփոխել, լավացնել, մասնավորապես «*փոփոխություն մտցնել՝ լավացնելու՝ բարվոքելու նպատակով, փոխել դեպի լավը, բարվոքել*»³:

Եվ այսպես, ՀՀ սահմանադրության 114-րդ հոդվածի համաձայն ՀՀ սահմանադրության 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն: Սահմանադրության 114-րդ հոդվածը հատուկ սահմանադրաիրավական պաշտպանություն է սահմանում 1-ին, 2-րդ հոդվածների և հենց իր համար: Սահմանադրական իրավունքի գիտությունը հատուկ սահմանադրաիրավական պաշտպանություն ունեցող հոդվածներ է համարում սահմանադրությունների այն հոդվածները, որոնք փոփոխման ենթակա չեն⁴: Այդպիսի արգելքը համարվում է սահմանադրության կայունության իրավական երաշխիքներից մեկը, որն ապահովում է սահմանադրության ստատիկ բնույթը:

ՀՀ սահմանադրության 114-րդ հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ սահմանադիրը կաշկանդված է և չի կարող փոփոխել 1-ին, 2-րդ և 114-րդ հոդվածները: Ինչպես նշված է ՀՀ սահմանադրության մեկնաբանություններում⁵, այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է **տվյալ սահմանադրության շրջանակներում** (ընդգծումը մերն է) փոփոխություն կատարելու անհնարինությանը:

² ՀՀՊՏ 2013/49 (989), 11.09.13, հոդ. 829

³ Տե՛ս Ստեփան Մալխասեանց՝ «Հայերեն բացատրական բառարան», ԵՊՀ Հրատարակչություն, Երևան 2010, էջ 344:

⁴ Օրինակ, Հունաստանի (1975թ., հոդված 110), Իտալիայի (1947թ., հոդված 139), Ֆրանսիայի (1958թ., հոդված 89), Ալժիրի (հոդված 178) սահմանադրությունները արգելում են փոփոխության ենթարկել կառավարման հանրապետական ձևը: Հունաստանի սահմանադրությունը նաեւ արգելում է փոփոխել խղճի ազատությունն ամրագրող հոդվածը, իսկ Ալժիրի սահմանադրությունը չի թույլատրում փոփոխել այն հոդվածները, որոնք վերաբերում են պետական կրոնին, հիմնական իրավունքներին ու ազատություններին, տարածքային ամբողջականությանը: Բրազիլիայի 1988թ. սահմանադրության 60 հոդվածի համաձայն փոփոխման ենթակա չեն պետության դաշնային ձևը, ուղղակի, գաղտնի, համընդհանուր եւ պարբերաբար անցկացվող ընտրությունները, իշխանությունների տարանջատումը, անձնական իրավունքներն ու ազատությունները:

⁵ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Իրավունք 2010, 1067-1068 էջեր, <http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>

«... 114-րդ հոդվածը պետք է դիտարկել որպես հրամայական պահանջ՝ ուղղված սահմանադրական փոփոխությունների նախաձեռնության սուրյեկտներին, որոնց արգելվում է նախաձեռնել թվարկված հոդվածների փոփոխություն»։ Այդպիսի փոփոխությունը, ըստ էության, նշանակում է սահմանադրության գործողության դադարեցում և նոր սահմանադրության ընդունում։

Հանրությանը ներկայացված նախագծում սահմանադրության 114-րդ հոդվածը փոփոխվել է 203 հոդվածով և ունի հետևյալ բովանդակությունը. «*Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ և 203-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն*»։

Ինչպես տեսնում ենք, հոդվածը փոփոխության է ենթարկվել ոչ միայն ձևական առումով, այսինքն՝ փոփոխվել է հոդվածի հերթական համարը՝ 114-ից դառնալով 203, այլև բովանդակային առումով, քանի որ չփոփոխվող հոդվածների ցանկին դասվել է նաև սահմանադրության 3-րդ հոդվածը։

Այս տեսանկյունից ակնհայտ է, որ սահմանադրաիրավական հատուկ պաշտպանությունից օգտվող հոդվածը, այսինքն՝ սահմանադրության սահմաններում փոփոխման ոչ ենթակա հոդվածը ըստ էության ենթարկվել է փոփոխության, ինչը կարող էր տեղի ունենալ, ինչպես նշվեց, միայն **նոր սահմանադրության ընդունման** պարագայում։ Հետևաբար վերոնշյալը թույլ է տալիս պնդել, որ **հանրային քննարկման է ներկայացվել ոչ թե սահմանադրական փոփոխությունների նախագիծ, այլ նոր սահմանադրության նախագիծ**։

Սահմանադրություններում փոփոխությունների կատարումը ենթարկվում է որոշակի կանոնների։ Այսպես, սահմանադրության այս կամ այն հոդվածի գործողությունը դադարեցնող փոփոխությունը, ինչպես նաև հիմնական տեքստի լրացում հանդիսացող փոփոխությունը, չի կարող հանգեցնել նախկին բաժինների, գլուխների, հոդվածների համարակալման փոփոխությանը։ Նոր բաժինները, գլուխները, հոդվածները ներառվում են սահմանադրության տեքստում «պրիմ» ձևաչափով։ Իսկ ուժը կորցրած հոդվածի վերաբերյալ կատարվում է համապատասխան նշում՝ առանց այդ հոդվածի հերթական համարը սահմանադրության տեքստից հանելու⁶։

2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխությունները կատարվել են հենց վերոնշյալ կանոնների վրա։ Այդ է վկայում գործող սահմանադրության տեքստում 8.1, 8.2, 11.1, 11.2, 11.3, 27.1, 30.1, 30.2, 31.1, 33.1, 33.2, 42.1, 53.1, 56.1, 74.1, 83.1, 83.2, 83.3, 83.4, 83.5, 88.1, 94.1, 104.1, 105.1, 108.1 համարակալմամբ հոդվածների առկայությունը, որոնց ընդգրկումը սահմանադրության տեքստում չի փոփոխել մյուս հոդվածների հերթական համարները։ Սահմանադրության մեջ առկա է նաև նշումը 78 հոդվածի ուժը կորցնելու մասին, սակայն տվյալ հոդվածը շարունակում է սահմանադրության տեքստի մաս հանդիսանալ։

Ի տարբերություն նախորդ սահմանադրական փոփոխությունների՝ ներկայացված սահմանադրության նախագծի տեքստում փոփոխված են սահմանադրության գրեթե

⁶ Конституционное право зарубежных стран, под. общ. ред. М. В. Баглая, Ю. И. Лейбо, Л.М. Энтина, НОРМА, Москва, 2008, стр. 89-90.

բոլոր հողվածների հերթական համարները: Հողվածների համարների փոփոխություն կատարվել է նույնիսկ այն դեպքում, երբ հողվածի բովանադակության մեջ փոփոխություն տեղի չի ունեցել: Օրինակ՝ նախագծի 20-րդ հողվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Սահմանադրության նույնաբովանդակ ամրագրում տրված է 12-րդ հողվածում:

Այսպիսով, վերոնշյալ վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնել, որ հանրությանը ներկայացված սահմանադրության նախագծում պահպանված չեն սահմանադրական փոփոխությունների համար սահմանված իրավաստեղծ տեխնիկայի վերոնշյալ կանոնները, հետևաբար հանրության դատին է հանձնվել բոլորովին նոր սահմանադրություն՝ որպես առանձին և ինքնուրույն նորմատիվ իրավական ակտ:

ԳԼՈՒԽ 2. Նոր սահմանադրության օրյեկտիվ անհրաժեշտությունը

Բազում հարյուրամյակներ զրկված լինելով պետականությունից՝ հայ ժողովրդի կյանքը հիմնականում կարգավորվել է կոնկրետ ժամանակաշրջանում Հայաստանը տիրապետողների կողմից պարտադրված կանոններով կամ ավելի ճիշտ՝ կամայականություններով: Մոտ երկու տասնամյակ է, ինչ հայ ժողովուրդը ձեռք է բերել անկախություն և ձեռնամուխ է եղել իր կյանքի կանոնները սահմանող իրավունքի համակարգի ձևավորմանը, որի հիմքում էլ դրվել է 1995 թվականի հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված սահմանադրությունը:

2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեով փոփոխվել է Սահմանադրությունը, որն էլ ուժի մեջ է մտել նույն թվականի դեկտեմբերի 6-ին:

Սահմանադրությունը պետության իրավունքի համակարգի հիմքն է, որը սահմանում է պետական իշխանության կազմակերպման հիմնական սկզբունքները: Այդ է պատճառը, որ տարբեր քաղաքական ուժերի պայքարն ընթանում է, ամենից առաջ սահմանադրության շուրջ: Թափանցել այդ պայքարի բովանդակության մեջ նշանակում է հասկանալ, թե որ ուժերն են երկիրն առաջնորդում առաջադիմության ուղիով և որ ուժերը՝ հետադիմության⁷: Այս հանգամանքի հաշվառմամբ է, որ աշխատանքային խումբը փորձել է հնարավորինս քննարկվող հիմնախնդիրները կապել հանրապետությունում առկա քաղաքական իրողությունների հետ, առանց որի սույն մասնագիտական կարծիքը կմատուցվեր որպես կյանքից կտրված և անշունչ մի իրավական երևույթ, որը որևէ կերպ հաշվի չի առնում Հայաստանում այսօր ձևավորված և ժամանակին համահունչ իրողություններ:

Դասագրքային ճշմարտություն է, որ սահմանադրական իրավունքը ձևավորվել է որպես ազգային իրավունքի ինքնուրույն ճյուղ դեռևս XVIII-XIX դարերում: Դա պայմանավորված էր սահմանադրական իրավունքի առանձնահատկությամբ, որը կոչված է պաշտպանելու անձի իրավունքները հնարավոր չարաշահումներից, որը կարող է թույլ տրվել պետության կողմից: Այս առումով է, որ անհրաժեշտություն է առաջանում սահմանափակել հանրային իշխանությունն անձի իրավունքներով⁸:

Գործող սահմանադրությունը 1995թ-ից ի վեր երաշխավորել է անձի իրավունքները՝ միջազգային նորմերին համապատասխան, կուսակցական բազմակարծությունը, պետական իշխանության տարանջատումն ու հավասարակշռումը, դատական իշխանության անկախությունն ու տեղական ինքնակառավարումը: Այս առումով խումբն արձանագրում է, որ ցանկացած օրենք, ինչքան էլ այն կատարյալ լինի, կմնա լուխ թղթի կտոր, եթե առկա չէ քաղաքական կամք և կարողություն այն կյանքի կոչելու: Ասվածի վառ ապացույցն է Շահամիր Շահամիրյանի կողմից 1773թ. օգոստոսի 15-ին Մադրասում կազմված «Որոգայթ»

⁷ Տե՛ս «Հայասանի Հանրապետության սահմանադրական իրավունք», Ն.Ա. Այվազյան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան 2008, էջ 14:

⁸ Ավելի մանրամասն տե՛ս Энтин Л. М. – Конституционное право зарубежных стран, Изд. Норма, М. 2009, ст. 1

Փառացը»⁹, որը, բացի պատմական արժեք ներկայացնելուց, որևէ նշանակություն չունի հայ ազգի կյանքում, և ազգը ապրում էր ստրկության մեջ: Նույնը կարելի է ասել նաև Սմբատ Սպարապետի (Գունդստաբլ) «Դատաստանագրքի»¹⁰ մասին, ոչ վաղ անցյալում խորհրդային սահմանադրությունների մասին և այլն: Այսինքն էական չէ, թե պատմական որ ժամանակաշրջանում ինչ է գրվել, էականը այն է, թե որքանով է գրվածը արտացոլել կոնկրետ հասարակական հարաբերությունները և որքանով է այն բխել այդ հասարակարգի օբյեկտիվ զարգացվածության շահերից:

Այս հարցի վերաբերյալ շատ ճիշտ արտահայտվել են մեր բազմաթիվ մտավորականներ: Մասնավորապես հայտնի իրավագետ՝ Հենրիկ Խաչատրյանն իր աշխատություններից մեկում նշում է. **«Սահմանադրությունը պարզապես երկրի հիմնական օրենքը չէ, այլ հենց այն իրավաբանական փաստաթուղթը, որն ունակ է (և պարտավոր է) մարդու իրավունքները դարձնել իրական ու անսասան:** Այսպես հիմնահարցը ընկալեցին պետության հիմնարար նշանակության օրենքներ ստեղծելու ուղղությամբ առաջին քայլեր կատարող իմաստունները, որոնք դրանց օգնությամբ ու միջոցով փորձեցին պատնեշ կառուցել պետական իշխանության կամայականությունների դեմ:

Սահմանադրական իրավունքի տեսաբանները դիտարկում են, որ հասարակության մեջ առկա է **փաստական և իրավաբանական** սահմանադրություն: Սա ուշադրության արժանի կարևոր հանգամանք է: Փաստական սահմանադրությունը պետական իշխանության առնչությամբ հասարակության տարբեր խմբերի և նաև ազգերի միջև քաղաքական հարաբերություններ են: Դրանք գոյություն ունեն փաստացիորեն, օբյեկտիվորեն: Խոսքը հասարակության և պետության կառուցվածքի մասին է՝ անկախ օրենքում ամրագրված լինելու հանգամանքից: Այստեղից էլ փաստական սահմանադրություն հասկացությունը: Հարց է ծագում. ի՞նչ իմաստ ունի սահմանադրությունների նման բաժանումը: Իմաստ կա և բավականին մեծ. փաստական սահմանադրությունն իր արտացոլումն է ստանում իրավականի մեջ, այսինքն՝ պետության մեկ օրենքում կամ օրենքների համակարգում: **Սկզբունքորեն փաստական և իրավաբանական սահմանադրությունների միջև պետք է համապատասխանություն լինի, բայց այն, ինչ որ պետք է լինի, միշտ չէ, որ լինում է:** Այս է հարցի բարդությունը:

Սահմանադրությունն իր բովանդակությամբ կարող է շատ ժողովրդավարական լինել և ... իրականությանը չհամապատասխանող՝ ամբողջությամբ կամ առանձին դրույթներով: Նման պարագայում սահմանադրությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրական է, կեղծ: Սահմանադրությունների պատմության մեջ նման օրինակներ շատ կան:

Կարևոր է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում խորամուխ լինել ու դիտարկել, թե արդյոք արտաքինապես գեղեցիկ, շրջահոսուն սահմանադրական ձևակերպումների ու

⁹ «Որոգայթ փառաց», Հայաստանի հրատարակչություն, Երևան 2002թ:

¹⁰ «Դատաստանագիրք», Իրավունք հրատարակչություն, Երևան 2008թ:

դարձվածքների հետևում ի՞նչ է թաքնված¹¹: Որպես օրինակ Հենրիկ Խաչատրյանը բերում է խորհրդային անցյալի փորձը՝ նշելով. «Վերցնենք խորհրդային առաջին սահմանադրությունների օրինակը: 1918 և 1924 թվականների սահմանադրությունները նեղ խնդիրներ լուծեցին՝ ամրագրել երկրում գոյություն ունեցող քաղաքական իշխանությունը, սահմանադրականորեն ձևակերպել այն ժամանակվա աշխարհայացքային կողմնորոշիչ դրույթներ՝ սեփականության բոլոր տեսակների պետականացումը, աշխատանքային պարիակի անհրաժեշտությունը, «բարձրագույն» շահերով արդարացվող անհավասարությունը և այլն: Ինչ վերաբերվում է 1936թ. սահմանադրությանը (ավելի ճիշտ կլինի անվանել հակասահմանադրություն), ապա այստեղ չափազանց շատ էին իրականությունից կտրված դեկլարատիվ բնույթի նորմերը: Սա առաջին հերթին վերաբերում է քաղաքացիների քաղաքական իրավունքներին ու ազատություններին, զգալի չափով նաև սոցիալ-տնտեսական իրավունքներին: Գաղտնիք չէ, որ մենք այդպես էլ չկարողացանք ապահովել քստ կատարած աշխատանքի քանակի ու որակի վարձատրման սահմանադրական սկզբունքի կենսագործումը, զգալի չափով նաև աշխատանքի իրավունքը: Շատ դրույթներ լուրջ թղթի վրա են մնացել նաև գործող խորհրդային սահմանադրություններից, թեև վերջիններս զգալի առաջընթաց էին՝ նախորդների համեմատ¹²»:

Խումբն արձանագրում է, որ այս տեսանկյունից անհրաժեշտ է հստակ տարանջատում մտցնել ներկա ժամանակաշրջանում նախագծի ընդունման օբյեկտիվ և սուբյեկտիվ անհրաժեշտության միջև: Ընդ որում նախագծի ընդունման օբյեկտիվ անհրաժեշտության բացակայության հիմնավորումը մեխանիկորեն հանգեցնում է սուբյեկտիվ շահի առկայության, որը կարող է լինել բազմապիսի և բազմազան, և որի բացահայտումը մեծ հաշվով խմբի առաքելության մեջ չի մտնում:

Այս տեսակետից խումբը գտնում է, որ սահմանադրության բերումով, կամ դրա անկատարության կամ թերի կարգավորումներ առաջարկելու իմաստով Հայաստանում իրավական ոլորտի որևէ ճգնաժամ երբևէ չի դիտարկվել:

Այդուհանդերձ խումբն արձանագրում է, որ առաջարկվող նախագծի հիմնական նպատակը թերևս այն է, որ Հայաստանում փորձ է արվում կիսանախագահական համակարգից անցում կատարել դեպի խորհրդարանական համակարգ¹³, որոշակի առանձնահատկություններով (կայուն մեծամասնություն և այլն): Հատկանշական է այն հանգամանքը, որ նախագծի անհրաժեշտությունն առաջ է քաշել Հանրապետության նախագահ Մերժ Մարգարյանը, ում 2013 թվականի նախընտրական ծրագրում որևէ խոսք չի եղել Հայաստանում նոր սահմանադրություն ընդունելու անհրաժեշտության մասին¹⁴: Այս տեսակետից բաց է մնում նաև Հայաստանի

¹¹ «Ամերիկայի միացյալ նահանգների սահմանադրությունը», Հենրիկ Խաչատրյան, «Հայաստան» հրատ. Երևան 1991թ, էջ 6-7:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 8:

¹³ Խորհրդարանական համակարգի թերությունների մասին կլիտսվի «Կառավարման համակարգի վտանգները» գլխում:

¹⁴ Տե՛ս http://www.president.am/u_files/file/docs/election-programm-2013-hy.pdf

Հանրապետական կուսակցության մոտեցումը, քանի որ այդ կուսակցությունը ևս որևէ ակնարկ չի արել նոր սահմանադրություն ընդունելու անհրաժեշտության մասին: Ասվածը կարևոր է նրանով, որ ցույց է տալիս հայկական իրականությունն այն իմաստով, որ կուսակցական համակարգը Հայաստանում կախված է անձերից, ովքեր շատ հաճախ հակված չեն հետևել իրենց իսկ կողմից հայտարարվածին: Պետք է փաստել նաև, որ այսօր Ազգային ժողովի պատկերն այնպիսին է, որ այնտեղ մեծամասնություն է կազմում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, և ԱԺ-ն իր վերջին տարիների գոյության ընթացքում չի արձանագրել մի դեպք, երբ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ցանկացել է անցկացնել որևէ օրինագիծ և չի կարողացել անցկացնել: Ասվածը կարևոր է նրանով, որ ըստ էության այսօր Հայաստանը փաստացի կառավարվում է Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից, քանի որ կառավարության գերակշռող մասը այդ կուսակցության անդամներն են, նույնը կարելի է ասել նաև օրենսդիր մարմնի մասին, իսկ դատական իշխանությունը, համաձայն մի շարք հեղինակավոր միջազգային կազմակերպությունների զեկույցների,¹⁵ գտնվում է գործադիր մարմնից կախվածության մեջ :

Խումբն արձանագրում է, որ որևէ օրենք կամ առավել ևս սահմանադրություն նորով փոխարինելու դեպքում հանրությանը հստակ պետք է ցույց տրվեն գործողի այն էական թերությունները, որոնց պայմաններում հասարակական առաջընթացն ուղղակի անհնար է, և դրա պատճառը միմիայն նշված սահմանադրությունը կամ օրենքն է: Որպես օրինակ կարելի է վկայակոչել ԱՄՆ սահմանադրությունը, որն իր ընդունման պահից (1787թ.) մինչ օրս փոփոխվել է միայն 27 անգամ¹⁶: Նույնը կարելի է ասել նաև այլ պետությունների մասին¹⁷, ընդ որում նշված փոփոխությունները կատարվել են փուլ առ փուլ, բայց ոչ ամբողջովին նոր սահմանադրություն ընդունելով: Ինչ վերաբերում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրությանը, ապա այն Երկրորդ աշխարհամարտից հետո ի սկզբանե ենթակա է եղել նորով փոխարինվելու, և պետք է նշել, որ մինչ օրս էլ այդ հարցը արդիական է¹⁸: Կարելի է բերել նաև Մեծ Բրիտանիայի օրինակը, որտեղ թեև կողիֆիկացված սահմանադրություն գոյություն չունի, սակայն գործում են մի շարք ակտեր¹⁹, որոնք, չնայած իրենց հնությանը, համապարփակ երաշխավորում և գործնականում պաշտպանում են անձանց իրավունքները: Ասվածից կարելի է եզրահանգել, որ օրենքը

¹⁵ Ի թիվս այլնի տես նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մյուսիեկսիի զեկույցը 2014թ-ի հոկտեմբերի 5-9 Հայաստան կատարած այցելությունից հետո:

¹⁶ https://ru.wikipedia.org/wiki/Список_поправок_к_Конституции_США

¹⁷ https://ru.wikipedia.org/wiki/Поправки_к_Конституции_России

¹⁸ Ավելի մանրամասն տե՛ս Ю. И. Лейбо, М. А. Могунов, «Конституционное право зарубежных стран», Изд. Норма, Москва 2009г., ст. 596-642.

¹⁹ «Ազատությունների մեծ խարտիան» 1215թ, «Իրավունքների մասին հանրագիրը» 1628թ, «Իրավունքների մասին բիլլը» 1689թ, «Գահաժառանգման մասին օրենքը» 1701թ, «Պառլամենտի մասին օրենքը» 1911թ, «Վեստմինստրական ստատուտը» 1937թ, «Օրենքը թագի մինիստրների մասին» 1937թ և այլն, առավել մանրամասն տե՛ս Г. П. Толстопятенко «Конституционное право зарубежных стран», Изд. Норма, Москва 2009г., ст. 495-539.,

այն գլխավոր երաշխիքը չի, որ անձանց իրավունքները կպաշտպանվեն, այլ գլխավոր երաշխիքը օրինական և արդար ընտրությունների արդյունքում իշխանության եկած այն բարոյական անձանց քաղաքական կամքն է, ովքեր ունակ են և պատրաստ են երաշխավորելու յուրաքանչյուրի հավասարությունը օրենքի և դատարանի առջև:

Անցնելով Հայաստանի իրականությանը՝ պետք է նշենք, որ բազմաթիվ են դեպքերը, երբ Սահմանադրությունն ուղղակի չի կատարվել թե՛ օրենսդիր, թե՛ դատական և թե՛ գործադիր իշխանությունների կողմից: Այս տեսակետից պետք է արձանագրել, որ Հայաստանում սահմանադրությունը մինչ օրս կրում է իրավական բնույթ՝ հեռու փաստականից: Ավելի կոնկրետ՝ սահմանադրությամբ ամրագրված նորմերը գրեթե չեն ապահովում դրանով կարգավորող հարաբերությունները և գործում են այնքանով, որքանով համապատասխանում են կոնկրետ իշխանությունների սուբյեկտիվ շահերին:

Ըստ ասվածի հիմնավորում առաջինը կարելի է նշել սահմանադրության 65-րդ հոդվածը, ըստ որի՝ պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Համանման պահանջ է սահմանում նաև Սահմանադրության 88-րդ հոդվածը՝ կառավարության անդամի համար, 98-րդ հոդվածը՝ դատավորի համար և այլն: Գալով իրական կյանք՝ մենք տեսնում ենք այս հոդվածների կոպիտ խախտման բազմաթիվ դեպքեր²⁰, որոնք անթաքույց խրախուսվում են իշխանությունների կողմից:

Սահմանադրության դրույթների կատարման թերացման մյուս ակնառու փաստը սահմանադրական դատարանի որոշումների չկատարումն է, որի մասին պարբերաբար բարձրաձայնում է նույն սահմանադրական դատարանը, և որի արդյունքում բազմաթիվ են անձի իրավունքների կոպիտ խախտումները:

Այսպես, սահմանադրական դատարանը 2006թ.-ից մինչև 2014թ. հրապարակված տարեկան զեկույցներում անդրադառնում է իր որոշումների կատարման որակին՝ նշելով, որ իր որոշումները այս կամ այն կերպ չեն կատարվել թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր և թե՛ դատական մարմինների կողմից²¹: Բացի այդ, խմբի ձեռքի տակ առկա են նաև այլ փաստեր, որ թե՛ վճռաբեկ դատարանի և թե՛ օրենսդիր մարմնի կողմից ուղղակիորեն չեն կատարվել սահմանադրական դատարանի որոշումները:

Համաձայն սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ազգային ժողովը գործող օրենքները երկու տարվա ընթացքում համապատասխանեցնում է

²⁰ Կարծիքը չանձնավորելու համար կոնկրետ անուններ չեն նշվում, սակայն որպես աղբյուր վկայակոչվում են մամուլում հրապարակված բազմաթիվ փաստեր:

²¹ Տե՛ս «Հաղորդումներ սահմանադրական դատարանի ընդունված որոշումների կատարման վիճակի վերաբերյալ» 2006թ-ի, էջ 14-17, 2007թ-ի, էջ 34-39, 2008թ-ի, էջ 31-33, 2009թ-ի, էջ 3-11, 2010թ-ի, էջ 43-49, 2011թ-ի, էջ 45-52, 2012թ-ի, էջ 51-59, 2013թ-ի, էջ 38-39, 2014թ-ի, էջ 40-49

սահմանադրության փոփոխություններին: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ Ազգային ժողովը մեկ տարվա ընթացքում օրենքով սահմանում է Հայաստանի Հանրապետության օրհներգը: Խումբը փաստում է, որ Ազգային ժողովի կողմից վկայակոչված դրույթներն ուղղակի չեն կատարվել²²:

Առավել ուշագրավ է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2014թ.-ին հրապարակված «Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ» արտահերթ զեկույցը²³, որտեղ պաշտպանը հստակ նշում է, թե ՀՀ դատական որսոյանում ինչքան կաշառք են վերցնում դատավորները: Այսպես, **«Դատական կաշառքի սակագներ. Կաշառքի չափը որոշվում է հայցագնի 10 տոկոսից էլնելով: Ընդհանուր առմամբ հարցվածների մեծ մասի պնդմամբ կաշառքի սակագները տատանվում են հետևյալ միջակայքերում. «առաջին ատյանում 500 - 10.000 ԱՄՆ դոլար, «վերաքննիչ դատարանում 2000 - 15.000 ԱՄՆ դոլար, «Վճռաբեկ դատարանում 10.000 – 50. 000 ԱՄՆ դոլար»²⁴**: Նշված զեկույցում պաշտպանը խոսում է նաև դատական համակարգի ծայրահեղ ծանր կախվածության և այլ իրավական պետության ուղիով գնացող պետության համար անհարիր երևույթների մասին:

Վերը նշված զեկույցից հետո որևէ քաղաքական կամ իրավական գնահատականներ չեն տրվել, չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ զեկույցում նշված երևույթները վերացնելու ուղղությամբ, դատական համակարգի բարձրագույն օղակներում շարունակել են պաշտոնավարել այն անձինք, ովքեր պատասխանատու են զեկույցում նշված երևույթների համար:

Այս ամենի արդյունքում ակնհայտ է, որ սահմանադրությունը չի կատարվում գործող իշխանությունների կողմից, մասնավորապես դրանով չի ապահովվում սահմանադրության գլխավոր ֆունկցիան, այն է՝ անձի իրավունքների անսասան և իրական երաշխավորումը, իշխանության սահմանափակումը անձի իրավունքներով և այլն: Հետևաբար նման պայմաններում ուղղակի անհնար է որոշել սահմանադրության դրույթների վատ կամ լավ լինելը, քանի որ այն մեծամասամբ իշխանությունների կողմից կամ չի կիրառվում, կամ կիրառվում է այնքանով, որքանով այն չի հակասում իշխանությունների սուբյեկտիվ շահերին, հետևապես կարելի է արձանագրել, որ իշխանություններն իրական կյանքում սահմանափակված չեն անձի իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք²⁵:

Վերը նշվածի հաշվառմամբ խումբը գալիս է այն եզրահանգման, որ այսօր Հայաստանում առկա չէ օբյեկտիվ անհրաժեշտություն նոր սահմանադրություն ընդունելու, քանի որ այսօր Հայաստանում կայացած չէ ընտրական համակարգը²⁶, բացառապես սուբյեկտիվ պատճառներով, ապահովված չէ դատական իշխանության

²² Օրինակ, մինչ օրս չի փոփոխվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի բազմաթիվ նորմեր, օրենքով չի սահմանվել պետական օրհներգը և այլն:

²³ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, Երևան, 09/12/2013թ

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 5:

²⁵ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի երրորդ մաս:

²⁶ Տե՛ս <http://transparency.am/hy/news/view/1086> հղումը:

անկախությունն ու անկաշառությունը, օրենսդիր և գործադիր մարմինների կողմից չեն կատարվում սահմանադրությամբ ամրագրված պահանջները, հետևապես այդ մասով սահմանադրությունը կյանքից կտրված փաստաթուղթ է, որի լավ կամ վատ լինելը անհնար է պարզել: Նման պայմաններում խումբը արձանագրում է նաև, որ առաջարկող նախագիծը հանրությանն է ներկայացվել՝ հիմքում ունենալով անձի (անձանց) սուբյեկտիվ շահ, որը կարող է լինել բազմապիսի և որոնք անկանխատեսելիության պատճառով կարող են ճակատագրական լինել Հայաստանի Հանրապետության համար.

ԳԼՈՒԽ 3. Մարդու իրավունքների գլխում առկա վտանգներ

Սույն գլխում խումբը կանդրադառնա միայն այն հոդվածներին, որոնք իրենց մեջ թաքնված վտանգներ են պարունակում: Միաժամանակ խումբն արձանագրում է, որ բոլոր այն հոդվածները, որոնց վրա խումբը կանգ չի առնում, համեմատած սահմանադրության հետ որևէ առաջընթաց չեն ապահովում, իսկ այն նորամուծությունները, որոնք զետեղվել են նախագծի մեջ, էական նշանակություն չունեն, քանի որ բոլոր այն հարցերը, որոնք կարգավորվում են ճյուղային օրենսդրությամբ կամ կարող են կարգավորվել, Հանձնաժողովը անտեղի դրանք զետեղել է նոր սահմանադրության մեջ՝ անհարկի ծանրաբեռնելով այն: Այս առումով տեղին է մեջբերել բրիտանացի հայտնի սահմանադրագետ Ա. Դայսիի խոսքերը, ով, ժամանակին քննադատելով օրենքում խոսքի ազատության ամրագրումը, ասում էր, որ այդ դեպքում կարելի է հասնել նրան, որ օրենքով ամրագրվի նաև կոշիկների կապերը կոճկելու պահանջը²⁷:

Եվ այսպես, խումբն իր խորը մտահոգությունն է արտահայտում և հանրության ուշադրությունն է հրավիրում հետևյալ հոդվածների վրա:

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

- 1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն արժեքը մարդն է: Մարդու անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:***
- 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է:***
- 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:***

Հիմնարար իրավունքների և ազատությունների մասում նախագծում առաջնահերթությամբ աչքի զարնոդ և ամենատազնապահարույց փոփոխությունը, համեմատ սահմանադրության, վերջինի 3-րդ հոդվածի փոփոխությունն է՝ դրանից հանելով նույն հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ «պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան»: Վկայակոչված հոդվածը առանց վարանելու կարելի է կոչել մեր սահմանադրությամբ հիմնարար իրավունքների և ազատությունների մասին դրույթների սահմանադրությունը, իսկ հանված 2-րդ մասը մինչ այսօր ծառայում է որպես հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման հարցում պետության

²⁷ Ств Энтин Л. М. «Конституционное право зарубежных стран», Изд. Норма, Москва 2009, ст. 5

համար գործող կայուն պատվար՝ հստակ եզրագծելով այդ իրավունքների և ազատությունների միջամտության սահմանը:

Ընդ որում՝ սահմանադրության 3(2) հոդվածով նախատեսված պաշտպանության ամրությունը ապահովված է միջազգային իրավունքի՝ Հանրապետության նկատմամբ կիրառելի ողջ ծավալով, այլ ոչ միայն միջազգային պայմանագրային իրավունքի դրույթներով, ինչն էլ, որպես կանոն, սխալմամբ ընկալվում է որպես մարդու իրավունքների հարցերը սուվերեն-անհատ (կամ անհատների խումբ կամ կազմակերպություն կամ ժողովուրդ կամ համայնք) հարաբերություններում կարգավորող միակ սպեկտրը:

Վերացնելով նվազագույն պաշտպանության այս շեմը՝ մարդու իրավունքների ոլորտում Հանրապետության վավերացրած միջազգային համապատասխան պայմանագրի չեղյալ հայտարարվելու դեպքում վերանում է միջազգային սովորույթային իրավունքի ուժով և ծավալով տվյալ հիմնարար իրավունքի և/կամ ազատության պաշտպանությունից օգտվելու իրավական հնարավորությունը, ինչպիսին ներկայում մեզ վերապահված է սահմանադրության 3(2) հոդվածի ուժով: Այլ խոսքով, սա անհատական հիմնարար իրավունքի և/կամ ազատության պաշտպանության մեկ ամբողջական մակարդակի՝ միջազգային սովորույթային իրավունքով պաշտպանվող աստիճանից անկում է:

Հոդված 5. Իրավական նորմերի աստիճանակարգությունը

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմեր:

Խումբը նախ արձանագրում է, որ նշված հոդվածից դուրս է մնացել գործող սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն» դրույթը: Բացի այդ, սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը սահմանում է. «Միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությունը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել»: Ակնհայտ է, որ գործող սահմանադրությունն ավելի հստակ է

սահմանում միջազգային պայմանագրերի վավերացման հարցը՝ սահմանելով, որ եթե միջազգային պայմանագիրը հակասում է սահմանադրությանը, ապա այն չի կարող վավերացվել: Այլ է հարցը նախագծի դեպքում, որտեղ հեղինակները հրաժարվել են գործող սահմանադրության վկայակոչված նորմից:

Հոդված 23. Մարդու արժանապատվությունը

Մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Նախագծի 23-րդ հոդվածն ամրագրում է մարդու ամենակարևոր հիմնական իրավունքը՝ արժանապատվության իրավունքը: Եվ պատահական չէ, որ մարդու հիմնական իրավունքների գլուխը սկսվում է հենց այդ նորմով: Մարդու արժանապատվությունը սահմանադրության բարձրագույն բարիքն է: Այն սահմանադրության արժեհամակարգի առանցքն է և բոլոր հիմնական իրավունքների հիմքը /նախագծի 3-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ նախադասություն/, որոնք իրենց հերթին կոնկրետացնում են մարդու արժանապատվության իրավունքը:

Ըստ նախագծի 23-րդ հոդվածի ձևակերպման՝ «Մարդու արժանապատվությունն անխախտելի է»: Առաջին հայացքից շատ նորմալ թվացող այս ձևակերպումն իրականում շատ վտանգավոր է ու հետևաբար անթույլատրելի:

Խնդրի էությունը հետևյալն է:

Այսպես, հիմնական իրավունքները սահմանափակում են պետությանը /նախագծի 3-րդ հոդ. 3-րդ մաս/: Դա նշանակում է, որ պետությունն իր գործունեության ընթացքում պետք է միշտ հաշվի նստի հիմնական իրավունքների հետ, այսինքն՝ հաշվի առնի դրանց պահանջները և չխախտի դրանք: Հիմնական իրավունքները չխախտելու պահանջն արդեն նշանակում է, որ բոլոր հիմնական իրավունքներն անխախտելի են, այն է՝ ոչ մի պարագայում պետությունը դրանք խախտել չի կարող: Սակայն հիմնական իրավունքները կարող են սահմանադրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով սահմանափակվել պետության կողմից, և հիմնական իրավունքների սահմանափակումը չի նշանակում դրանց խախտում, քանի դեռ պետությունը դրանք սահմանափակելիս պահպանել է սահմանադրությամբ դրանց սահմանափակման համար սահմանված պահանջները: Ավելի պարզ ասած՝ հիմնական իրավունքները չեն խախտվում, եթե պետությունը դրանք սահմանափակում է սահմանադրության պահանջներին համապատասխան: Այստեղից տրամաբանորեն բխում է, որ հիմնական իրավունքները խախտվում են միայն այն դեպքում, երբ պետությունը դրանք սահմանափակում է՝ չունենալով դրա համար սահմանադրաիրավական որևէ արդարացում: Հետևաբար որևէ հիմնական իրավունքի խախտում ստուգվում է երեք քայլով.

1. նախ պետք է պարզել, թե ո՞ր հիմնական իրավունքի պաշտպանության տակ է ընկնում կոնկրետ մարդկային վարքը.
2. այնուհետև պետք է ստուգել, թե արդյո՞ք պետությունն ինչ-որ կերպ սահմանափակել է այդ հիմնական իրավունքը, այսինքն՝ անհնար դարձրել

կամ ինչ-որ կերպ դժվարացրել է արդյոք այդ հիմնական իրավունքով պաշտպանվող վարքը: Եթե այո, ապա

3. երբորդ քայլով ստուգվում է, թե արդյոք պետությունն իր այդ սահմանափակման համար սահմանադրաիրավական որևէ արդարացում ունի, այսինքն՝ հիմնական իրավունքը սահմանափակելիս պահպանել է արդյոք սահմանադրության պահանջները: Եթե ոչ, ապա հիմնական իրավունքը խախտվել է, ինչն անթույլատրելի է:

Վերևում ասվածն ամբողջությամբ վերաբերում է բոլոր հիմնական իրավունքներին, **բացի** (!) մարդու արժանապատվությունից: Այսօրվա գիտության մեջ և դատական պրակտիկայում գերիշխող կարծիքի համաձայն՝ մարդու արժանապատվության իրավունքը, ի տարբերություն մյուս բոլոր հիմնական իրավունքների, չի կարելի անգամ սահմանափակել: Պետության կողմից մարդու արժանապատվության իրավունքի նկատմամբ ցանկացած միջամտություն միաժամանակ դրա խախտում է: Դա բխում է նրանից, որ մարդու արժանապատվությունը ազատախոհ ժողովրդավարությունում բարձրագույն արժեք է, ինչպես դա ամրագրված է նախագծի 3-րդ հոդ. 1-ին մասում, և այդ պատճառով չի կարող սահմանափակվել ո՛չ այլոց հիմնական իրավունքներով, ո՛չ սահմանադրորեն ամրագրված այլ արժեքներով: Այսպիսով, քանի որ մարդու արժանապատվությունը ա սահմանափակել չի կարելի նույնիսկ որևէ պարագայում, ուստի այն ոչ միայն անխախտելի է, ինչպես ամրագրված է նախագծի 23-րդ հոդվածում, այլև այն ուղղակի **«անձեռնմխելի»** (!) է: Անթույլատրելի ու հակասահմանադրական է նրա նկատմամբ ցանկացած միջամտություն: Այս հիմքով արգելվում է նաև կյանքի ու արժանապատվության հավասարեցումը: Կյանքի նկատմամբ միջամտությունը ծայրահեղ հանգամանքներում կարելի է արդարացնել /օրինակ՝ ահաբեկիչներին բռնելիս ոստիկանների կողմից նրանց մահացու վիրավորելը/, բայց մարդու արժանապատվության նկատմամբ միջամտությունը երբեք, ոչ մի պարագայում որևէ արդարացում չունի: Ցանկացած միջամտություն միաժամանակ դրա խախտում է: Հետևաբար նախագծի 23-րդ հոդվածի ձևակերպման մեջ «անխախտելի» հասկացությունը պարտադիր պետք է փոխարինել «անձեռնմխելի» հասկացությամբ: Միայն այդ պարզ ու աներկիմաստ ձևակերպման /«անձեռնմխելի»/ դեպքում կբացառվի մարդու արժանապատվության սահմանափակման որևէ հնարավորություն: Ամբողջ ասվածից տրամաբանորեն բխում է, որ մարդու արժանապատվության իրավունքի խախտումը ստուգվում է ընդամենը երկու քայլով՝

1. նախ պետք է պարզել, թե արդյո՞ք կոնկրետ մարդկային վարքն ընկնում է մարդու արժանապատվության իրավունքի պաշտպանության տակ:
2. երկրորդ քայլով ստուգվում է, թե արդյոք պետությունն ինչ-որ կերպ սահմանափակե՞լ է այդ հիմնական իրավունքը: Եթե այո, ապա մարդու արժանապատվության իրավունքն արդեն խախտվել է: Այլևս կարիք չկա ստուգելու, թե արդյոք պետությունն իր այդ սահմանափակման համար

սահմանադրաիրավական որևէ արդարացում ունի: Նման որևէ արդարացում գոյություն չունի:

Այսպիսով, կրկնում ենք՝ սա չափից դուրս լուրջ խնդիր է, և ցանկացած սխալ այս հարցում կարող է հանգեցնել աղետալի հետևանքների:

Հոդված 41. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը, և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

2. Մտքի, խղճի և կրոնի ազատության արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Յուրաքանչյուր քաղաքացի, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է զինվորական ծառայությունը, ունի օրենքով սահմանված կարգով այն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու իրավունք:

4. Կրոնական կազմակերպություններն իրավահավասար են և օժտված են ինքնավարությամբ: Կրոնական կազմակերպությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

Նախագծի 41(2) հոդվածի համաձայն այս ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ **պետական անվտանգության**, հասարակական կարգի, առողջության և բարոյականության, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Մինչդեռ սահմանադրությամբ այս ազատության սահմանափակման համար պետական անվտանգության հիմքը նախատեսված չէ: Այսինքն՝ նախագծում այս իրավունքին պետության միջամտության համար նախատեսված է լրացուցիչ հնարավորություն:

Բացի այդ այս ազատության միջամտության համար պետական անվտանգության հիմքը նախատեսված չէ նաև ՄԻԵԿ 11 եւ Դաշնագրի 18 հոդվածներով: Այսինքն՝ նախագծի քննարկվող հոդվածն ակնհայտորեն հակասության է ստեղծում հանրապետության միջազգային պարտավորությունների հետ այս ազատության մասով, քանի որ նախատեսում է միջամտության լրացուցիչ հիմք. ինչը նախատեսված չէ, ապա և թույլատրելի չէ վկայակոչված միջազգային պայմանագրերով:

Հոդված 42. Կարծիքի արտահայտման ազատությունը

- 1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:**
- 2. Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:**
- 3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:**

Նախագծի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի: Այս իրավունքը ներառում է ... տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ... փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը»: Այս հոդվածի շարադրանքի հակասականությունը և անորոշությունը հղի է արտահայտվելու ազատության նկատմամբ կամայական միջամտությունների լուրջ վտանգով: Մասնավորապես նախագծի հեղինակների կողմից ակնհայտորեն շփոթ է ստեղծվել «արտահայտվելու ազատություն»(freedom of expression) կամ «խոսքի ազատության»(freedom of speech) հասկացությունների և «կարծիքի ազատության»(freedom of opinion) հիմնարար հասկացությունների միջև: «Կարծիքի արտահայտման ազատությունը» որևէ դեպքում իր մեջ չի ներառում տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը ո՛չ ակադեմիական գրականության, ո՛չ էլ միջազգային իրավական փաստաթղթերում և դրանց հիման վրա միջազգային դատարանների կամ այլ մարմինների պրակտիկայում: Կարծիքի արտահայտման ազատության իրավունքը ներառում է միայն գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը: Արտահայտվելու կամ խոսքի ազատության իրավունքն է, որ ներառում է նաև տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը: Հետևաբար, անտեղի նորամուծությունների դիմելու փոխարեն, պետք էր ընդամենը անփոփոխ թողնել սահմանադրության 27-րդ հոդվածի ձևակերպումը (ինչպես և ողջ սահմանադրության), որի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը իր մեջ ներառում է գաղափարներ և տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը:

Այս սխալ ձևակերպումն իրականում սպառնալիք է խոսքի ազատության սահմանների նկատմամբ՝ ստեղծելով անորոշ և արտահայտվելու ազատության տրամաբանությանը հակառակ կառուցակարգեր և հասկացություններ, որոնց

խառնաշփոթի մեջ կտրուկ բարձրանալու է կամայականությունների դիմելու ռիսկը այնպիսի զգայուն ոլորտում, ինչպիսին արտահայտվելու ազատության ոլորտն է:

Հոդված 60. Սեփականության իրավունքը

- 1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:*
- 2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:*
- 3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*
- 4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով օրենքով սահմանված դեպքերի:*
- 5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:*
- 6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձիք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:*
- 7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:*
- 8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:*

Համաձայն նախագծի 60(1) հոդվածի՝ «յուրաքանչյուր ոք ունի **օրինական հիմքով** ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»: Սեփականության իրավունքի նման ձևակերպումն ինքնին ենթադրում է ցանկացած վիճահարույց իրավիճակում սեփականատիրոջ կողմից իր իրավունքների ձեռքբերման օրինականության հիմնավորում, որը տրամագծորեն հակասում է սեփականության իրավունքի ամբողջ տրամաբանությանը. «սեփականության իրավունք» հասկացությունն իր մեջ ինքնին պարունակում է «օրինական տիրապետման» կանխավարկածը: Չի կարող պետության կողմից սեփականության իրավունքի ճանաչումը դիտարկվել դրա ձեռքբերման օրինականության կանխավարկածից դուրս: Այլ խոսքով՝ սեփականատիրոջ իրավունքն իր գույքի՝ սեփականության նկատմամբ օրինական է այնքան, քանի դեռ չի ապացուցված դրա հակառակը:

Այս ձևակերպումն ակնհայտորեն հետընթաց է սահմանդրությամբ նախատեսված սեփականության պաշտպանությունից:

Բացի այդ 60(8) հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել **օրենքին համապատասխան սահմանված** հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»: Մրանով արդեն հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարումներ վճարելու

պարտականությունն այլևս ոչ թե անհրաժեշտաբար սահմանվելու է օրենքով, այլ օրենսդրի որոշմամբ կարող է սահմանվել ոչ օրենսդրի կողմից, օրինակ՝ գործադիր իշխանության մարմինների: Հարկահանության և պարտադիր վճարների հավաքագրման ոլորտում այլևս ոչ թե միայն օրենսդիրն է որոշելու հարկի կամ տուրքի կամ պարտադիր վճարի տեսակը, չափը վճարման պայմանները, այլև նման լուրջ իրավասությունը կարող է վերապահվել նաև այլ մարմինների՝ պայմանով, որ նման հարկի, տուրքի և այլ վճարի վճարման պարտականությունը և դրա վճարման պայմանները **սահմանվեն օրենքին համապատասխան:**

Սա Սահմանդրության 46 հոդվածից ամբողջական հետընթաց է, որի համաձայն հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարումներ կատարելու պարտավորությունը ծագում է միայն դրանք «օրենքով սահմանված կարգով և չափով» նախատեսված լինելու դեպքում:

Հոդված 62. Վնասի հատուցման իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Եթե հանցանք կատարելու համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված անձն արդարացվել է այն հիմքով, որ նոր կամ նոր երևան եկած որևէ հանգամանք ապացուցում է նրա դատապարտման ոչ իրավաչափ լինելը, ապա այդ անձն ունի օրենքին համապատասխան հատուցում ստանալու իրավունք, եթե չի ապացուցվում, որ այդ հանգամանքի ժամանակին բացահայտումը լիովին կամ մասամբ կախված էր տվյալ անձից:

Խումբը նախ արձանագրում է, որ նախագծի հիշյալ հոդվածը էական հետընթաց է սահմանադրության համեմատությամբ: Նախ սահմանադրության 21-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է, որ **մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:** Նախագծի հիշյալ հոդվածը իր մեջ մի շարք վտանգներ է պարունակում այն իմաստով, որ, օրինակ, անձը, ելնելով իր կամ իր ընտանիքի անվտանգությունից, չի բացահայտում, թե ով է կատարել հանցագործությունը, իսկ հետագայում պարզվում է իրական հանցագործություն կատարած անձը: Նշված հոդվածի բովանդակային իմաստով անձը չի կարող ստանալ որևէ փոխհատուցում այն տարիների համար, որը նա անցկացրել է անազատության մեջ: Այստեղ հաշվի չի առնվել մի շատ կարևորագույն սկզբունք, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը:

Խումբը միաժամանակ փաստում է, որ թեև սույն նորմն առավելապես ներմուծվել է ՄԻԵԿ 7-րդ արձանագրության 3-րդ հոդվածից, այդուհանդերձ, հաշվի առնելով

Հայաստանում այսօր ձևավորված անկատար իրավակիրառ պրակտիկան, նշված նորմը կարող է բազմաթիվ խնդիրներ առաջացնել: Եվ վերջում, խումբը փաստում է, որ ՄԻԵԿ-ով երաշխավորվում են անձանց նվազագույն իրավունքները, ինչը երբևէ չի նշանակում, որ պետությունները չպետք է ավելի բարձր նշաձող դնեն այդ հարցում:

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

- 1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:***
- 2. Դատական վարույթը կամ դրա մի մասը օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:***
- 3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:***

Նախագծի 63(1) հոդվածից, ի տարբերություն սահմանադրության 19(1) հոդվածի, դուրս է մնացել դատական քննության «հավասարության» սկզբունքի սահմանադրական ամրագրումը, ինչն ինքնին հետընթաց է վերջին նշված նորմի նկատմամբ:

Սակայն այս հոդվածում ամենաուշագրավ և վտանգավոր հետընթացը ձևակերպված է հետևյալ կերպ. «**Հիմնական իրավունքների** խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:

Սա կրննակի հետընթաց է սահմանադրությունից և մասամբ հակասում է նաև հանրապետության միջազգային պարտավորություններին:

Մասնավորապես սահմանադրության 22(2) հոդվածի համաձայն «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումը»: Այսինքն՝ նախագծում նախատեսված մոտեցմամբ, որպեսզի որևէ կողմ հասնի ապացույցի անթույլատրելիության, ապա պետք է ոչ թե ապացուցվի նման ապացույցի ձեռքբերման ընթացքում օրենքի խախտումը, այլ որ այդ ապացույցի ձեռքբերմամբ խախտվել են **հիմնական իրավունքներ**: Այսինքն՝ հասնի մի առանձին կամ կոմբինացված դատավարության միջոցով, որի արդյունքում միայն հնարավոր կլինի լուծել այդ ապացույցի թույլատրելիության հարցը:

Բացի այդ և ամենակարևորը. նախագծի համապատասխան նորմի համաձայն, որևէ ապացույցի անթույլատրելիության եզրահանգման հասնելու համար, պետք է ապացուցվի, որ (i) այդ ապացույցը խաթարում է արդար դատաքննության իրավունքը կամ, որ (ii) այդ ապացույցի ձեռքբերմամբ խախտվել է մեկից ավելի հիմնական իրավունք («**հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված**»):

Երկրորդ բաղադրիչը, ինչը բխում է հայոց լեզվի կանոնների ուղիղ կիրառման արդյունքում, բացարձակապես ոչ իրագործելի խնդիր է ցանկացած կողմի համար քրեական վարույթի գործերի գերակշիռ մեծամասնության դեպքում, եթե ապացույցը ձեռք բերված լինի ակնհայտորեն անթույլատրելի ճանապարհով (օրինակ՝ խոշտանգմամբ կամ առանց դատարանի որոշման խուզարկությամբ կամ այլ՝ մեկ հիմնական իրավունքի խախտմամբ): Պետք է նկատել, որ **«հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված»** արտահայտության փոխարեն նախագծի հեղինակների համար հասանելի է եղել նաև **«որևէ հիմնական իրավունքի խախտմամբ ձեռք բերված»** արտահայտությունը, որը փաստորեն չի օգտագործվել:

Երկրորդ բաղադրիչն ուղղակիորեն հակասում է նաև հանրապետության միջազգային պարտավորություններին (ՄԻԵԿ 6 հոդված), ինչպես և մի շարք այլ պայմանագրերով, որոնցով մասնավորապես միայն խոշտանգմամբ ձեռք բերված ապացույցը անթույլատրելի ճանաչելու ուղղությամբ արդեն իսկ ձևավորվել է իրավունքի պատկառելի հատված՝ անկախ այլ իրավունքների խախտման առկայությունից:

Հոդված 65. Յուզմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը

Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր:

Համաձայն նախագծի 65 հոդվածի՝ «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, **եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ**»: Վերջին ընդգծված հատվածում պարունակվող պայմանն ակնհայտորեն հետընթաց է սահմանորոշության 22(1) հոդվածի համեմատ, որն առանց որևէ պայմանի նախատեսված է յուրաքանչյուրի՝ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի համար: Նախագծի 65 հոդվածում նման պայմանի ապահովումն ակնհայտորեն անորոշ է. ոչ մի որոշակիություն չկա «եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ» արտահայտության մեջ, ինչը հղի է կամայականությունների կիրառումով հարցաքննվողների նկատմամբ:

Հոդված 68. Կրկին դատվելու արգելքը

- 1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:***
- 2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանն օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:***

Նախագծի վկայակոչված հոդվածում կատարվել է նորամուծություն. այսպես կոչված՝ **«կամ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա»**, ինչն ըստ էության կրկին բերված է ՄԻԵԿ 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածի 2-րդ մասից: Խուսմբը փաստում է, որ սա գործնականում նշանակում է, որ մեծ է հավանականությունը, որ անձը, մեղադրվելով որևէ հանցանք կատարելու մեջ և արդարացվելով դատարանի կողմից, կարող է միննույն մեղադրանքով կրկին անգամ ենթարկվել քրեական հետապնդման՝ առանց նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքի (նոր կամ նոր երևան եկած հանգամանքի դեպքում որոշումը կայացնում է բացառապես դատարանը), եթե քննություն իրականացնող մարմնի ղեկավարը գտնի, որ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, որոնք ազդել են դրա արդյունքի վրա: Նշված նորմը ոչ միայն հետընթաց է սահմանադրության 22-րդ հոդվածի վերջին պարբերության համեմատությամբ, այլև հղի է լուրջ վտանգներով՝ հաշվի առնելով նաև Հայաստանի իրավապահ մարմինների ներկա զարգացվածության աստիճանը: Այսինքն՝ մեծ է հավանականությունը, երբ անձն իրեն մեղսագրվող արարքի համար արդարացվի դատարանի կողմից, սակայն տարիներ անց կրկին կանգնի դատարանի առջև, այն դեպքում, երբ նոր իրավասու պաշտոնատար անձն որոշի, որ նախորդ քննության ժամանակ տեղ են գտել էական թերություններ, ինչն ազդել է գործի արդյունքի վրա:

Հոդված 69. Դատապարտվածի բողոքարկման իրավունքը

Հանցանք կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վերադաս դատական աստիճանի կողմից վերանայման իրավունք:

Խուսմբն արձանագրում է, որ ոչ միայն այս հոդվածում, այլև ողջ նախագծում ընտրվել են հայերեն իրավաբանական լեզվին ոչ բնորոշ ձևակերպումներ և շարադրանքներ: Մասնավորապես հիմնական իրավունքների ամրագրման համար հիմնականում ընտրվել է հայերեն իրավաբանական լեզվին ոչ բնորոշ հետևյալ ձևակերպումը՝ «Յուրաքանչյուր ոք /մի բանի/ իրավունք ունի»:

Թեև տվյալ ձևակերպումը զուտ լեզվական տեսանկյունից սխալ չէ, սակայն բնորոշ չէ իրավաբանական լեզվին: «Յուրաքանչյուր ոք /մի բանի/ իրավունք ունի» ձևակերպման փոխարեն հայերեն իրավաբանական լեզվին ավելի բնորոշ ու գործածական է «Յուրաքանչյուր ոք ունի /մի բանի/ իրավունք» ձևակերպումը: Այսինքն՝ «Յուրաքանչյուր ոք իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի» ձևակերպման փոխարեն ավելի ճիշտ կլինեին գործածել «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք» ձևակերպումը: Բայց նախագծում հանդիպում են նաև այդպիսի ճիշտ ձևակերպումներ, օրինակ՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության

իրավունք» /38-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախադասություն/: Այդպես են ձևակերպված հիմնական իրավունքները նաև նախագծի 32-րդ հոդ. 1-ին մասում, 33-րդ հոդ. 1-ին մասում և այլն: Բայց հանդիպում է նաև մի երրորդ տեսակի ձևակերպում՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի /մի բանի/»: Օրինակ՝ նախագծի 37-րդ հոդ. 1-ին մասի 1-ին նախադասության մեջ ասվում է՝ «Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը»: Այդպես են ձևակերպված հիմնական իրավունքները նաև 34-րդ հոդ. 3-րդ մասում, 37-րդ հոդ. 3-րդ մասում և այլն: **Այս ամենը խոսում է որոշակի անհետևողականության մասին: Նույնիսկ եթե ընտրվում է սխալ ձևակերպում, ապա սահմանադրության նման լուրջ փաստաթղթում պիտի պահպանվի ձևակերպումների միասնականությունը, այսինքն՝ ամեն դեպքում պետք է գործածվեր վերևում նշված երեք տարբեր ձևակերպումներից միայն մեկը:**

Գալով նախագծի 69-րդ հոդվածին՝ պետք է նշենք, որ այն շատ անհաջող է ձևակերպված, մասնավորապես դրա առաջին նախադասությունը՝ «Քրեական հանցանք կատարելու համար դատարանի կողմից դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից»: Այս նույն հիմնական իրավունքը սահմանադրության մեջ ժամանակին ստացել է հրաշալի իրավաբանական ձևակերպում՝ առանց որևէ ստորադասական նախադասության անհրաժեշտության՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք»:

Հոդված 78. Համաչափության սկզբունքը

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Մահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Նախագծի 78 հոդվածի համաձայն «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար...»: Այդ սկզբունքը նկարագրող նորմը պետությանը և դրա ներկայացուցիչներին տալիս է հիմնարար ազատության կամ իրավունքի միջամտության համար անհամեմատ ավելի լայն հնարավորություն, քան սահմանադրությունը, որի 43 հոդվածը՝ որպես միջամտության պայման, այն է՝ միջամտության անհրաժեշտության առանցքային տարր սահմանում է նման անհրաժեշտությունը միայն «ժողովրդավարական հասարակությունում»: Այստեղ պետք է նկատել, որ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» մոտեցման նպատակը ոչ թե միջամտություն իրականացնող պետության

ժողովրդավարական բնույթը ցուցանելն է, այլ արձանագրելը, որ իրավունքին կամ ազատությանը միջամտությունը թույլատրելի դիտարկվելու համար նման միջամտությունը պետք անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում նման անհրաժեշտությանը առաջադրվող չափով: Սա աներկբայորեն ավելի բարձր ապացուցման շեմ է սահմանում միջամտությունը թույլ տված պետության համար, քան անհրաժեշտություն տեքստի առանց կողմնորշի կիրառումը: Օրինակ՝ արտահայտվելու ազատությանը պետության կողմից միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս (նախագծում անվանված է կարծիքի ազատություն) «ժողովրդավարական հասարակությունում» բնորոշիչը ուղղակիորեն պարտադրում է, որ նման միջամտության անհրաժեշտությունը գնահատելիս նկատի ունենան նաև «հանդուրժողականության և լայնախոհության» պահանջները՝ որպես «ժողովրդավարական հասարակության» բնութագրիչներ, այլ խոսքով՝ նեղացնել պետության միջամտության հնարավորությունը՝ առաջադրելով նաև այդ պահանջները:

Այսինքն՝ այս հոդվածի առաջին նախաստորայտի մեջ «անհրաժեշտ է» պայմանն առանց «ժողովրդավարական հասարակությունում» նշելով՝ էականորեն ընդլայնվում է պետության կողմից միջամտության հնարավորությունը, ինչը նաև հակասում է հանրապետության միջազգային իրավական պարտավորություններին, մասնավորապես ՄԻԵԿ շրջանակում մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ (ՄԻԵԿ հոդվածներ 6, 8-11 և 4-րդ արձանագրության 2-րդ հոդված):

Սահմանադրական իրավունքներ, որոնք ներառված չեն Նախագծում

Աշխատանքային իրավունքներ

Սահմանադրության 32(2) հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Նախագծում այս իրավունքը որոշ բովանդակային փոփոխություններով սահմանվել է 3-րդ գլխում՝ **որպես օրենքով սահմանման ենթակա իրավունք**, այլ խոսքով այլևս չունի սահմանադրական ինքնուրույն իրավունքի կարգավիճակ (նախագծի 82(1)), ինչն ակնհայտ հետընթաց է սահմանադրության պաշտպանությունից:

Այլ սոցիալական իրավունքներ.

Հետևյալ խումբ իրավունքները նույնպես **չունեն** սահմանադրական ամրագրում, որով շեշտակի հետընթաց է արձանագրվել նաև սրանց կարգավիճակի մասով: Չունենալով սահմանադրական կարգավիճակ և դրանց վրա անմիջականորեն հենվելով՝ անձը

այլևս չի կարողանա պաշտպանել իր սահմանադրական իրավունքները՝ ներառյալ՝ նորմատիվ սահմանադրական գանգատի միջոցով:

Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Նախագծով այս իրավունքը այլևս սահմանված չէ որպես սահմանադրական իրավունք, փոխարենը 3-րդ գլխում նախատեսվել է այս իրավունքը օրենքով սահմանելու վերաբերյալ դրույթ (նախագծի 83 հոդված):

Սահմանադրության 34-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար: Բավարար կենսամակարդակի սահմանադրական իրավունքի փոխարեն նախագծով նախատեսվել է հետևյալ դրույթը. կրկին նախագծի 84 հոդվածի համաձայն նախատեսվել է ընդամենը, որ «օրենքը սահմանում է յուրաքանչյուր կարիքավորի և տարեց մարդու արժանապատիվ գոյության իրավունքը»:

Ամփոփելով վերը նշվածը՝ խումբն արձանագրում է, որ նախագիծը ավելի հետընթաց է, քան սահմանադրությունը:

ԳԼՈՒԽ 4. Կառավարման համակարգի վտանգները

Սահմանադրության նախագծի տեքստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնաքարային փոփոխությունը կապված է կառավարման ձևի փոփոխության հետ: Այդ փոփոխությունը չէր կարող կատարվել գործող սահմանադրության շրջանակներում, ուստի նոր սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը ծագել է հենց խառը կառավարման համակարգից պառլամենտական կառավարման ձևին անցնելու հիմքի վրա:

Հայաստանի Հանրապետությունում կառավարման պառլամենտական համակարգի ներդրման համար անհրաժեշտ նախադրյալների առկայությունը կամ դրանց բացակայությունը գնահատելու համար հարկ ենք համարում անդրադառնալ պառլամենտական կառավարման առանձնահատկություններով պայմանավորված այն հիմնական գործոններին, որոնք այդ համակարգի արդյունավետ գործողության հիմք են հանդիսանում:

Պառլամենտական կառավարման համակարգ ունեցող երկրներում այդ համակարգի հաջողությունը խարսխված է ուժեղ կուսակցական համակարգի վրա, քանի որ կառավարման բեռը մեծամասամբ ընկնում է պառլամենտի վրա: Կուսակցությունների ուժեղ լինելու հանգամանքը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Մասնավորապես ուժեղ և կայացած կուսակցությունը, ի թիվս այլնի

ա. ունի հստակ, համաձայնեցված տեսակետներ երկրի քաղաքական, տնտեսական և սոցիալական օրակարգում գտնվող հարցերի վերաբերյալ,

բ. ստեղծված է գաղափարական հենքի վրա և ունի կուսակցության գաղափարների շուրջ համախմբված անդամներ,

գ. մշակում է կարևորագույն հարցերի վերաբերյալ քաղաքականություն, որը բխում է քաղաքացիների շահերից,

դ. հիմնված է ղեկավարման ժողովրդավարական համակարգի վրա, որոշումների կայացմանն գործընթացը ապակենտրոնացված է ու թափանցիկ:

Անկայուն և թույլ կուսակցությունը կախված է կոնկրետ անձի խարիզմատիկ առանձնահատկություններից. այն կարող է ձևավորվել շատ արագ և ձեռք բերել մեծ համբավ: Մակայն, այսպիսի կուսակցությունը, ձևավորվելով անձի, այլ ոչ թե գաղափարի շուրջ, հաճախ չի կենտրոնանում քաղաքացիների կարիքների վերհանման և կառավարման ինստիտուտներում նրանց շահերի ներկայացման վրա: Չկայացած կուսակցական համակարգի մասին կարող է վկայել նաև քաղաքական կուսակցությունների, հետևաբար նաև ընտրական համակարգի նկատմամբ անվստահությունը հասարակության շրջանում:

Այս տեսանկյունից Հայաստանի կուսակցական համակարգը չի կարող համարվել ուժեղ և կայացած, քանի որ.

ա. կուսակցական համակարգում առկա են կուսակցություններ, որոնք հանդիսանում են տարբեր խմբերի թույլ կոալիցիա, որտեղ կուսակցության անդամները տարբեր տեսակետներ ունեն կարևոր հարցերի վերաբերյալ,

բ. կուսակցությունների անդամները կայացնում են քաղաքական իրավիճակով պայմանավորված որոշումներ՝ մի կուսակցությունից մյուս կուսակցություն տեղափոխվելու կամ կուսակցությունից դուրս գալու վերաբերյալ, ինչպես օրինակ, տեղի ունեցավ սույն թվականի փետրվար-մարտ ամիսներին, երբ ԲՀԿ մի շարք անդամներ դիմում ներկայացրեցին կուսակցությունից դուրս գալու վերաբերյալ (մինչ այդ ՕԵԿ հետ կապված և այլն),

գ. քաղաքական որոշակի իրավիճակներում կուսակցությունները կարող են որոշում կայացնել կոալիցիայից դուրս գալու մասին, ինչը խարխլում է կառավարման համակարգի կայունությունը,

դ. քաղաքական կուսակցությունները բավարար չափով ինստիտուցիոնալիզացված չեն,

ե. առկա է կուսակցությունների ներքին ժողովրդավարության կատարելագործման և ամրապնդման խնդիր,

զ. հասարակությունում առկա է մեծ անվստահություն քաղաքական կուսակցությունների և ընտրական համակարգի նկատմամբ ընդհանրապես, ինչն արձանագրել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը իր որոշումներում՝ մասնավորապես քաղաքական համակարգի ու իշխանության նկատմամբ անվստահությունը համարելով օբյեկտիվ իրողություն²⁸:

Դասագրքային ճշմարտություն է, որ պառլամենտական հանրապետություններում ողջ գործադիր իշխանությունը գտնվում է կառավարության ձեռքում: Եվ քանի որ գործադիր իշխանությունը հիմնված է պառլամենտի մեծամասնության վրա, ապա ունի հնարավորություն էականորեն ազդելու պառլամենտի գործունեության վրա նախ և առաջ օրենքների ընդունման հարցում: Ակնհայտ է, որ օրինագծերի մեծամասնությունը, որոնք հանդիսանում են պառլամենտի քննարկման առարկա, ներկայացվում են հենց կառավարության կողմից (օրինակ Գերմանիայում ավելին քան 80%)²⁹: Պառլամենտական հանրապետություններ են հանդիսանում Գերմանիան, Իտալիան, Հունաստանը և այլն: **Այդպիսի կառավարման ձևը ներհատուկ է զարգացած երկրներին, քանի որ ենթադրում է բավականին բարձր ժողովրդավարություն, կայուն և բարձր զարգացած կուսակցական համակարգի առկայություն և հասարակության մոտ բարձր քաղաքական մշակույթի առկայություն**³⁰:

Վերոթվարկյալ հանգամանքներում պառլամենտական կառավարման ձևի ներդրումը ժամանակավրեպ է, քանի որ այսօր Հայաստանում չեն դադարում

²⁸ ՄԴՈ-1077, կետ 10

²⁹ Տե՛ս Մ. Ա. Могунова, «Конституционное право зарубежных стран», Изд. Норма, Москва 2009, ст. 151

³⁰ Տե՛ս նույն տեղը:

խոսակցությունները, ըստ որի հանրության մեծ մասը ընտրությունների դիմաց ստանում է 5000 դրամ գումար, հասարակության մոտ առկա է նիհիլիզմի բարձր մակարդակ, ապահովված չէ կուսակցությունների լիակատար թափանցիկությունը և այլն:

Ավելին. գաղափարախոսական բազմակարծության և բազմակուսակցության մասին սահմանադրության 7-րդ հոդվածն էականորեն փոփոխված է և նախագծի 8-րդ հոդվածի ձևակերպումներն այլևս չեն ներառում կուսակցությունների համար նախատեսված «ֆինանսական գործունեության հրապարակայնության» պահանջը: Սա կուսակցությունների ֆինանսական թափանցիկության և հաշվետվողականության նկատմամբ սահմանադրական պահանջից նվազում է, ինչը, հաշվի առնելով առաջարկվող կառավարման մոդելում կուսակցությունների կշռի շեշտակի բարձրացման հանգամանքը, հղի է կոռուպցիոն և այլ տեսակի չարաշահումների բարձր ռիսկով իշխանությունն իրականացնող, ինչպես և այլ կուսակցությունների կողմից:

Ամփոփելով կարող ենք հանգել այն եզրակացության, որ կառավարման համակարգի փոփոխությունը մշակելիս հաշվի չեն առնվել ՀՀ-ում պատմականորեն ձևավորված քաղաքական մշակույթի և կայացած քաղաքական կուսակցությունների համապատասխան համակարգի բացակայությունը, ընտրությունների առնվազն ցածր մակարդակը և այլն:

Այսպիսի պայմաններում պառլամենտական կառավարման համակարգի ներդրումը նշանակում է ոչ խորքային մոտեցում առկա քաղաքական և իրավական հիմնախնդիրներին, քանի որ օտարերկրյա փորձի տեղայնացումը հիմնված չէ ՀՀ-ում առկա իրավիճակի բազմակողմանի վերլուծության վրա, այն կարող է որակվել որպես իշխող կուսակցության քաղաքական որոշում, որը հղի է անկանխատեսելի վտանգներով:

ԳԼՈՒԽ 5. Օրենսդիր, դատական և գործադիր համակարգերի վտանգները

Հոդված 89. Ազգային ժողովի կազմը և ընտրության կարգը

- 1. Ազգային ժողովը կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից:*
- 2. Ազգային ժողովում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:*
- 3. Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորում: Եթե ընտրության արդյունքում կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորում: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով:*

Նախագծի հիշյալ հոդվածի 3-րդ մասը սահմանում է «կայուն խորհրդարանական մեծամասնություն» հասկացությունը, ինչը խմբի կարծիքով իր մեջ պարունակում է բազմաթիվ ռիսկեր Հայաստանի Հանրապետությունը միակուսակցական հանրապետություն դարձնելու առումով³¹: Հատկանշական է, որ խորհրդարանական կառավարման մշակույթ և համակարգ ունեցող Գերմանիայում նմանատիպ կարգավորում գոյություն չունի և այնտեղ յուրաքանչյուր դեպքում կազմվում է կոալիցիա³²: Այս առումով խումբն արձանագրում է, որ Հայաստանում ներդնելով նմանատիպ իրավակարգավորում՝ մեծ է վտանգը, որ իշխանության դեկին տևական ժամանակով կարող է լինել մեկ կուսակցություն, իսկ քանի որ կուսակցական համակարգը Հայաստանի Հանրապետությունում դեռևս գտնվում է սաղմնային վիճակում, ուստի կարելի է փաստել, որ այստեղ խոսքը գնում է անձերի մասին, քանի որ, ինչպես նշվեց վերը, այսօր Հայաստանում կուսակցությունները (որոշակի փոքր բացառություններով) անձիք են:

Հոդված 104. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները և Ազգային ժողովի խորհուրդը

- 1. Ազգային ժողովն իր կազմից ընտրում է Ազգային ժողովի նախագահ և նրա երեք տեղակալ: Տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների*

³¹ Ավելի մանրամասն տե՛ս Ռ.Հ. Պետրոսյան, «Քաղաքագիտություն», Երևան 2002, էջ 206-207:

³² Տե՛ս Գերմանիայի սահմանադրություն:

կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները ընտրվում և հետ են կանչվում պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2. Ազգային ժողովի նախագահը ներկայացնում է Ազգային ժողովը և ապահովում նրա բնականոն գործունեությունը:

3. Ազգային ժողովում ձևավորվում է Ազգային ժողովի խորհուրդ, որը կազմված է Ազգային ժողովի նախագահից, նրա տեղակալներից, խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից և մշտական հանձնաժողովների նախագահներից: Ազգային ժողովի խորհուրդը հաստատում է հերթական նստաշրջանների և նիստերի օրակարգերի նախագծերը, ինչպես նաև իրականացնում է Ազգային ժողովի կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

Խումբը, երկար կանգ չառնելով սույն հոդվածի վրա, այդուհանդերձ ցանկանում է մեկ նկատառում անել: Այսօր իշխանությունների կողմից շատ է բարձրացվում այն հարցը, ըստ որի նախագծով ընդլայնվել է ընդդիմության լիազորությունները, և որպես օրինակ նշում են այս հոդվածով սահմանված ազգային ժողովի նախագահի տեղակալի մեկ պաշտոնն ընդդիմությանը հատկացնելը:

Խումբն արձանագրում է, որ վկայակոչված հոդվածը, նախագծի 202-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, կարող է ցանկացած ժամանակ փոփոխվել քաղաքական մեծամասնության կողմից ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Նշվածը համադրելով կայուն խորհրդարանական մեծամասնություն ունեցող ԱԺ-ի հետ՝ ակնհայտ է դառնում, որ սույն դրույթը ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել, եթե այդպիսի ցանկություն ունենա իշխող կուսակցությունը: Այն որպես առաջընթաց ներկայացնելն առնվազն ժամանակավրեպ է:

Հոդված 125. Հանրապետության նախագահի ընտրության կարգը

1. Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից:

2. Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան քառասուն և ոչ ուշ, քան երեսուն օր առաջ:

3. Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը:

4. Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք քառորդը: Եթե Հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլին մասնակցած բոլոր թեկնածուները: Երկրորդ փուլում հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստացել է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդը: Եթե հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա

անցկացվում է ընտրության երրորդ փուլ, որին կարող են մասնակցել երկրորդ փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Երրորդ փուլում հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որը ստանում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

5. Եթե հանրապետության նախագահ չի ընտրվում, ապա տասնօրյա ժամկետում անցկացվում է հանրապետության նախագահի նոր ընտրություն:

6. Հանրապետության նախագահի ընտրության կարգի մանրամասները սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով:

Խումբը, վկայակոչված հոդվածը համադրելով ողջ նախագծի փիլիսոփայության հետ, արձանագրում է, որ կայուն մեծամասնություն ունեցող ԱԺ-ն ընտրում է հանրապետության նախագահ, այնուհետև նույն ԱԺ-ն լուծում է կառավարության գլխի՝ վարչապետի հարցը, որն իր հերթին ձևավորում է կառավարություն (նախագծի 149-րդ, 150-րդ հոդվածներ), այնուհետև՝ դատական իշխանություն (նախագծի 166 և այլ հոդվածներ): Խումբը իր խորը մտահոգությունն է արտահայտում, որ նման իրավակարգավորման և ներկա հասարակական հարաբերությունների զարգացվածության պարագայում Հայաստանի Հանրապետությունը կարող է ընկղմվել միակուսակցական կառավարման մեջ, ինչը լի է բազմաթիվ վտանգներով:

Հոդված 127. Հանրապետության նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը

1. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը:

2. Հանրապետության նախագահը՝ ընտրված արտահերթ ընտրության միջոցով, պաշտոնը ստանձնում է ընտրվելուց հետո տասներորդ օրը:

3. Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. «Ստանձնելով հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելիս լինել անաչառ, առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով և իմ ողջ ուժերը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:

Սահմանադրության 54-րդ հոդվածը սահմանում է. «*Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնում է օրենքով սահմանված կարգով՝ Ազգային ժողովի հատուկ նիստում, ժողովրդին տրված հետևյալ երդմամբ. "Ստանձնելով Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. անվերապահորեն կատարել Սահմանադրության պահանջները՝ հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ապահովել Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը՝ ի փառս Հայաստանի Հանրապետության և ի բարօրություն Հայաստանի Հանրապետության ժողովրդի:*»:

Խումբն արձանագրում է, որ ներկա սահմանադրության շրջանակներում ակնհայտ է, որ հանրապետության նախագահը երդվում է անվերապահորեն կատարել սահմանադրության պահանջները, այլ ոչ թե հավատարիմ լինել, երդվում է հարգել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները և ոչ թե առաջնորդվել միայն համապետական ու համազգային շահերով, երդվում է սպառնալից հանրապետության անկախությունը, այլ ոչ թե իր բոլոր ուժերը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում: Հատկանշական է, որ սահմանադրությամբ նախատեսված պահանջների կատարումը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հարգումը, Հայաստանի Հանրապետության անկախության ապահովումն իր երդման մեջ չի հիշատակում նաև կառավարության անդամը: Խումբը կարծում է, որ հողվածների համադրությունն ավելորդ է դարձնում ցանկացած վերլուծություն:

Հոդված 129. Օրենքի ստորագրումը և հրապարակումը

- 1. Ազգային ժողովի ընդունած օրենքը հանրապետության նախագահը ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է սահմանադրական դատարան՝ սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով:***
- 2. Եթե սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է սահմանադրությանը, ապա հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:***
- 3. Եթե հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը:***

Խումբն արձանագրում է, որ Սահմանադրական դատարանը հանրապետության նախագահի այդ դիմումը քննելու է վերացական վերահսկողության վարույթում, որովհետև նախագահի դիմումը կապ չունի դատարանում քննվող որևէ կոնկրետ գործի հետ, այսինքն՝ ոչ մի պարագայում չի կարող լինել կոնկրետ վերահսկողության առարկա: Իրավանորմերի վերացական վերահսկողության վարույթում Սահմանադրական դատարանը ստուգում է որոշակի իրավանորմերի համապատասխանությունը սահմանադրությանը: Ստացվում է վերացական սահմանադրական վերահսկողության համար անհրաժեշտ է իրավանորմերի գոյություն, որովհետև հնարավոր չէ ստուգել մի բան, ինչը գոյություն չունի: Հետևաբար հարց է ծագում, թե երբ է սկսվում նորմի իրավական գոյությունը: Իրավանորմն իր իրավական գոյությունը սկսում է, ըստ տրամաբանության, իրավաստեղծման գործընթացն ավարտվելու պահից, որովհետև միայն իրավաստեղծման գործընթացի արդյունքում են ստեղծվում իրավանորմեր: Հետևաբար օրենքները կարող են վիճարկվել հենց այդ պահից: Իսկ ե՞րբ է ավարտվում

իրավաստեղծման գործընթացը: Իրավաստեղծման գործընթացն ավարտվում է իրավանորմը պաշտոնական տեղեկագրում հրապարակելու պահից, որովհետև ձևականորեն այդ գործողությամբ է ավարտվում իրավաստեղծման գործընթացին մասնակից բոլոր սուբյեկտների գործունեությունը: Նորմի իրավական գոյության համար նրա ուժի մեջ մտնելը պարտադիր չէ: Նորմի ուժի մեջ մտնելը, որի համար կարելի է սահմանել ցանկացած ավելի ուշ ժամկետ, այլևս իրավաստեղծման գործընթացի մաս չէ, այլ սոսկ իրավանորմի բովանդակությունն է: Այսպիսով, իրավանորմերի սահմանադրական վերահսկողության համար վճռորոշ է ոչ թե նորմի ուժի մեջ մտնելու պահը, այլ նորմը սահմանված պարբերականում՝ պաշտոնական տեղեկագրում հրապարակելու պահը: Դրանից առաջ իրավական իմաստով դեռևս չկա իրավանորմ, հետևաբար հնարավոր չէ ստուգել գոյություն չունեցող ինչ որ բանի սահմանադրականությունը:

Այսպիսով, քանի որ իրավանորմերի վերացական սահմանադրական վերահսկողությունը ենթադրում է արդեն գոյություն ունեցող իրավանորմեր, ուստի դեռևս գոյություն չունեցող իրավանորմերի սահմանադրության հետ անհամատեղելիության նախնական հաստատումը հակասում է իրավանորմերի վերացական վերահսկողության իմաստին, ծագման պատմությանը և պաշտպանական ֆունկցիային: Գոյություն չունեցող իրավանորմերի սահմանադրականության ստուգումը բացառվում է: Քանի դեռ իրավաստեղծ մարմինը նորմը դեռ վերջնական չի ընդունել, և նրա բովանդակությունը վերջնական չի ձևակերպել, ապա այն՝ իբրև դեռևս գոյություն չունեցող իրավանորմ, չի կարող լինել իրավանորմերի վերահսկողության առարկա: Օրինագծերի նախնական վերացական վերահսկողությունը կլինի Սահմանադրական դատարանի կողմից օրենսդրի գործունեության նկատմամբ անթույլատրելի միջամտություն:

Հոդված 166. Դատավորների ընտրության և նշանակման կարգը

- 1. Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, տասներկու տարի ժամկետով: Սահմանադրական դատարանը կազմված է ինը դատավորից, որոնցից երեքը ընտրվում են Հանրապետության նախագահի, երեքը՝ Կառավարության, երեքը՝ դատավորների ընդհանուր ժողովի առաջարկությամբ: Դատավորների ընդհանուր ժողովը կարող է առաջարկել միայն դատավորներ: Նույն անձը Սահմանադրական դատարանի դատավոր կարող է ընտրվել միայն մեկ անգամ:*
- 2. Սահմանադրական դատարանն իր կազմից վեց տարի ժամկետով ընտրում է Սահմանադրական դատարանի նախագահ և փոխնախագահ՝ առանց վերընտրվելու իրավունքի:*
- 3. Վճարելի դատարանի դատավորներին նշանակում է հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք*

հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից:

4. Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:

5. Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

6. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ:

7. Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է հանրապետության նախագահը՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, երեք տարի ժամկետով: Դատարանի նախագահն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում:

8. Դատավորները պաշտոնավարում են մինչև վաթսուներեք, իսկ Սահմանադրական դատարանի դատավորները մինչև յոթանասուն տարին լրանալը:

9. Դատավորների ընտրությանը և նշանակմանը վերաբերող մանրամասները սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և դատական օրենսգրքով:

Խումբն այս և այլ հոդվածներում³³ իր խորը մտահոգությունն է արտահայտում այն հանգամանքի վերաբերյալ, որ քաղաքական մարմինը առավելապես սահմանափակում է դատական իշխանության անկախությունը՝ ընտրելով համապատասխան դատավորներին: Ասվածը էլ ավելի կարևորություն է ստանում նախագծի ողջ փիլիսոփայության համատեքստում, երբ ԱԺ-ն գործուն լծակներ ունի նշանակելու թե՛ վարչապետին, թե՛ նախագահին և թե՛ դատական իշխանության վերին ատյանի դատավորներին: Նման կարգավորումը գործնականում Հայաստանի Հանրապետությունը կդարձնի միակուսակցական կառավարվող երկիր, որտեղ քաղաքական մեծամասնությունը կորոշի բոլոր էական հարցերը:

Ասվածի լույսի ներքո, Խումբը փաստում է, որ Վենետիկի հանձնաժողովը դեռևս 2007թ-ի հունիսի 22-ին իր CDL-AD (2007) 028 «Զեկույց դատավորների նշանակման մասին»-ում խոսել է, որ բացի Սահմանադրական դատարանի դատավորներից, պառլամենտի կողմից դատավորների նշանակումը նպատակահարմար չէ, քանի որ

³³ Նախագծի 174-րդ հոդվածի 3-րդ մաս:

նման դեպքում հնարավոր չէ բացառել քաղաքական նկատառումների գերակայությունը թեկնածուների արժանիքների նկատմամբ: Այս զեկույցում Վենետիկի հանձնաժողովը հանգամանալից նշել է, որ քաղաքական մարմինը չպետք է ներգրավված լինի վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահների նշանակման և լիազորությունների դադարեցման հարցերին³⁴:

³⁴ Տե՛ս թիվ CDL-AD (2007) 028 «Զեկույց դատավորների նշանակման մասին»:

ԳԼՈՒԽ 8. Եզրահանգումներ

Մեր վերը շարադրած հակիրճ պարզաբանումների արդյունքում նույնիսկ ակնհայտ է, որ ոչ միայն բացակայում է սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը, այլ ավելին՝ մեր Հանրապետությունում վաղուց ի վեր հասունացել է մի իրավիճակ, երբ ձևավորվել է անհրաժեշտություն անփոփոխ պահել սահմանադրության դրույթները և կենտրոնանալ դրանց կատարման խնդիրների վրա:

Սույն կարծիքի 2-րդ գլխում հղում կատարված «Թրանսփարենսի Ինտերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն» ՀԿ կողմից 05/10/2015թ.-ին հրապարակված կարծիքը և դրանում պարունակվող եզրականումներն ամբողջությամբ կիսելով՝ մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն իրողության վրա, որ նույնիսկ ամենակատարյալ նախագծի առկայության և սահմանադրության փոփոխության հիմնավոր անհրաժեշտության դեպքում, սահմանադրական հանրաքվեի միջոցով ժողովրդի կամքի ազատ արտահայտման պայմանների և երաշխիքների բացակայության պայմաններում այդպիսի կամաարտահայտությամբ չի կարող սահմանադրություն փոփոխվել կամ փոփոխություն մերժվել:

Ձեր ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ իր անկախության պահից ի վեր մեր հանրապետությունում ընդունվել է մոտ 100000-ից ավել իրավական ակտ, որոնցով էլ մեզանում առ այսօր կարգավորվում են հարաբերություններ: Սահմանադրության նման արմատական փոփոխությունը առաջ է բերելու այդ ակտերի մեծ մասում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն, որի իրականացումը տարիների խնդիր է: Օրինակ՝ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, երբ փոփոխությունների էր ենթարկվել սահմանադրությունը, փոփոխման համար անհրաժեշտ իրավական ակտերի փոփոխությունն առ այսօր ընթացքում է և դեռ չի ավարտել: Մինչդեռ այս դեպքում մենք գործ ունենք մի քանի աստիճան ավելի ծանր խնդրի հետ, երբ արմատապես փոփոխվելու է սահմանադրությունը: Որպեսզի առավել հասկանալի լինի, թե ինչ կնշանակի ունենալ փոփոխման ենթակա իրավական ակտերի բազմահազարանոց զանգված և ձախողել այդ գործը տարիներ շարունակ, պատկերացրեք, որ այդ ողջ ընթացքում երկիրը գտնվելու է միմյանց հակասող հազարավոր իրավական ակտերի և կարգավորումների պայմաններում՝ մեզնից յուրաքանչյուրին ձգելով առանց այդ էլ անսանձ կոռուպացված համակարգի կամայականությունների հորձանուտը: Եվ սա տարիներ շարունակ:

Սույն կարծիքով արդեն նկարագրել ենք, որ սահմանադրության փոփոխությունների արդյունքում առնվազն երկու ասպեկտով ամբողջական աստիճանով նվազելու է Ձեր ցանկացած իրավունքի պաշտպանության ստանդարտը:

Վերլուծելով անհատական իրավունքների ստանդարտների նկատմամբ ոտնձգությունները՝ պետք է արձանագրենք, որ սույն կարծիքի 3-րդ գլխում դիտարկված 7 հիմնական իրավունքներից և իրավունքների խմբերից բոլորն էլ շեշտակի հետընթաց են սահմանադրությամբ ամրագրվածների նկատմամբ: Այսինքն՝ սահմանադրության փոփոխության անհրաժեշտության անվան տակ անհատական իրավունքների կամ ազատությունների ծավալը կամ պաշտպանության ստանդարտը շեշտակի նվազեցվել է.

- 2-ի դեպքում (արդար դատաքննության իրավունքի և մտքի, խղճի, կրոնի ազատության) նախագծում տեղ գտած ձևակերպումները հակասում են Հայաստանի միջազգային պարտավորություններին: Որպեսզի հասկանալի լինի, թե ինչ ասված է այս կամ այն նորմը հակասում է մարդու իրավունքների ոլորտում պետության ստանձնած պարտավորություններին, պետք է նկատի ունենալ, որ այդ պարտավորություններն այն նվազագույնն են, որ պետությունները պարտավոր են ապահովել: Այսինքն՝ նույնիսկ նվազագույնը չի ապահովվել նշված հոդվածներով:

Այս իրավունքներից սեփականության իրավունքի և արտահայտվելու ազատությանը վերաբերող դրույթներն առհասարակ հակասում են կոնկրետ իրավունքի ոլորտում իրավունքի փիլիսոփայության դոմինանտ սկզբունքներին և պարզ քաղաքացի-պետություն տրամաբանությանը՝ անտեղի շփոթ և կամայականություններով հղի միջավայր ստեղծելով մեզնից յուրաքանչյուրի այդ իրավունքի իրականացման համար:

Խմբի համոզմամբ ներկայացված նախագծում չի ներառվել գեթ մեկ դրույթ կամ նորմ, որը հնարավոր չէր կարգավորել սահմանադրության պայմաններում օրենքով: Այս դեպքում դուք Ձեզ հարց պետք է տաք, իսկ որն է պատճառը, որ նույն քաղաքական ուժը, որը Ազգային ժողովում որոշիչ մեծամասնություն ունի և ցանկացած օրենք կարող է ընդունել և պաշտոնյաները, որոնք ակտիվորեն ներգրավված են սահմանադրության փոփոխության քարոզարշավի մեջ (ընդհուպ մինչև սահմանադրական դատարանի նախագահը) մինչ այսօր իրենց իրավասությունների շրջանակում Ձեզ զրկել են այդ նորմերի արդյունքներից՝ համապատասխան օրենք չընդունելով և սահմանադրությանը համապատասխան մեկնաբանություն չտալով, ինչո՞ւ են հիմա փորձում համոզել, որ այս նախագծով Ձեր կյանքում ինչ-որ դրական բան կփոխվի: